

Ի Ն Զ Ո՞Ւ

Խաղաղութեան հրեշտակներն

Կը զարմանամ թէ ինչո՞ւ մարդն ունենայ Աստուած իմ
Տըխեղծ, տըձեւ ու խանձած, հրէ՛տ հոգի ու մարմին,
Յասկութիւնով մակաբոյծ, ու դիմակով խրտուիլակ,
Որոնք մտքիս մէջ կուտան իրեն ձեւ մը ալլանդակ:

Զէ՞ որ օր մը զայն Քեզի նըմանցուցիր, վառելով
Հոգւոյն լապտերն հոգիէդ. ու հարազատ պատկերովդ
Ստեղծեցիր, որ ըլլայ միշտ կատարեալ ու բարի...
Բայց հեռացած ալ Քեզմէ, ան ինքզինքին կը նմանի:

Տարօրինակ է իրաւ: Տես ան ի՞նչպէս կ'առնէ գոյն.
Կ'ըլլայ երկչոտ, կ'ըլլայ բիրտ, կ'ընէ լեզուն մեղր ու թոյն,
Իր նըմանին, իր եղբօր, եւ ինքզինքի՛ն շատ անգամ
Հայրայրեւով դըժպընի կեանք մ'անանուն, անկենդան:

Գիտեմ թէ մարդն աւելի չարադէմ է, քան բարի,
Ու իր մէջ լոկ, ո՞վ հրա՛ւ, կրնան ապրիլ միասին
Ջուրն ու կրակ հակադիր: Ո՞ն մի՛ թողուր Աստուած իմ
Որ բորբոքի կըրակն իր, կամ ջուրերուն տակ մարի,

Խանդն երկընթէն, օր մ'ինկած, իր ջուրերուն կատաղի:

Գ. ՄՈՒՇԵՆՑ

